ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2024թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՋՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 3-րդ մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Ջրային կառույցների» փակ բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ 0010, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Հալաբյան 31/2, գրանցման համար՝ 264.140.02965):

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՋՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի ենթակայության «Ջրային կառույցների» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միակ բաժնետերը հանդիսանում է Երևան համայնքը, որին 100%-ով պատկանում են Ընկերության բաժնետոմսերը:

««Ջրային կառույցների» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է նրանով, որ Ընկերության լուծարումը կստեղծի հնարավորություն քաղաքային գույքի արդյունավետ կառավարմանը և սպասարկմանը, աշխատակիցների թվաքանակի օպտիմալացմանը:

Նախատեսվում է Ընկերության աշխատակիցների տեղաբաշխումը «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի ենթակայության տակ, ինչը կստեղծի հնարավորություն աշխատանքների արդյունավետ իրականացման համար:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Ընկերության հետագա գործունեությունը դառնում է ոչ նպատակահարմար:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում ««Ջրային կառույցների» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**